

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 5

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝

2015 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դեկանի տարեկան հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին ներկա էր Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Սիմոնյանը: Նա տարեկան հաշվետվության ելույթի համար ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանին:

**Ա. Ավագյան** – Ֆակուլտետի դեկանը հանգամանալից անդրադարձավ ուսումնական գործընթացին /ուսումնական ծրագրեր, առարկայական ծրագրերի նորացում, դասավանդման մեթոդիկայի կատարելագործում, եռաստիճան ուսուցման խնդիրների հետ կապված աշխատանքների հստակեցում.../:

Նա մասնավորապես նկատեց.

«Հաշվետու ժամանակաշրջանը ընդգրկում է 2014-ի նոյեմբերից 2015-ի նոյեմբերը.

ֆակուլտետի ուսանողության թիվը այսօրվա վիճակով կազմում է 995 հոգի.

առկա՝ 785, որից բակ.- 696 ուս., մագ.- 89 ուս.

հեռակա՝ 210, որից բակ.- 136 ուս., մագ.- 74 ուս. (համեմատական կարգով ասենք՝ նվազել է 100 ուսանողով):

Դասախոսական կազմը – 103 հոգի, որոնցից 4-ը գիտության վաստակավոր գործիչներ են.

պրոֆեսորներ - 16

դոցենտներ - 50

ասիստենտներ - 28

դասախոսներ - 7

ասպիրանտներ -18, որից առկա՝ 4, հեռակա՝ - 14

հայցորդներ -14:

Ամբիոնների թիվը 7-ն է:

Պետական և կառավարական մեդալներ ու դիպլոմներ են ստացել 40 աշխատակիցներ:

Արտասահմանյան գործուղման մեջ են եղել 4 դասախոս (կարդացել են զեկուցումներ, վարել նիստեր): Ֆակուլտետի մի շարք գիտնականներ գրականության և լեզվի ինստիտուտների գիտական և աստիճանաշնորհող խորհրդի, գիտական այլ կազմակերպությունների ու ամսագրերի խմբագրական կոլեգիաների և գիտխորհրդների անդամներ են:

Ֆակուլտետում կազմակերպվել են գիտական 8 նստաշրջաններ, մասնակցել այլ կազմակերպությունների 10 գիտաժողովների:

Ֆակուլտետը սերտ համագործակցության մեջ է ՀՀ ԳԱԱ-ի հասարակագիտական բաժանմունքի, գրականության և լեզվի ինստիտուտների, գրողների միության, Մատենադարանի, Խ. Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարանի հետ:

Գիտխորհրդի նիստերի քանակը 14-ն է:

Սոցիարցումով հայ բանասիրության ֆակուլտետի միջին գնահատականը 4.41 է, դեկանի և տեղակալներինը՝ 4,0, դեկանատի աշխատանքը գնահատված է 4.73:

Ֆակուլտետում ակտիվորեն գործել են ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը:

ՀՀ Գրողների միության անդամ են 8 դասախոսներ, 2 ուսանող, մեկ ասպիրանտ: Թե՛ ֆակուլտետում, թե՛ գրողների միությունում կազմակերպվել են քննարկումներ, զեկուցումներ, հանդիպումներ: Գաբրիելյանը, Ավագյանը ՀՀ պետական, իսկ Քալանթարյանը և Մուրադյանը ՀՀ նախագահի գրական մրցանակների հանձնաժողովների անդամներ են: Ավագյանը նախագահել է Հրանտ և Մանուշակ Միմոնյանների գրական մրցանակի հանձնաժողովը:

Ասացինք, որ ֆակուլտետի մի շարք գիտնականներ՝ համագործակցում են ՀՀ ԳԱԱ հետ, մասնակցում համալսարանի և ակադեմիայի կողմից կազմակերպված համատեղ գիտական նստաշրջաններին (փակագծում ասենք, որ Մուրադյանը և Ավագյանը նիստերի համանախագահներ են եղել):

ՀՀ լեզվի և գրականության ինստիտուտների աստիճանաշնորհող և գիտական խորհուրդների անդամներ են Եզեկյանը, Սաքապետոյանը, Ավետիսյանը, Սաքապետոյանը, Հովսեփյանը, Մուրադյանը, Ավագյանը:

Ֆակուլտետը համագործակցում է նաև Մատենադարանի, մանկավարժական համալսարանի, Իսահակյանի անվան և Ազգային գրադարանների, համալսարանական մի շարք ֆակուլտետների հետ:

Հատկապես ակտիվ են եղել աշխատանքները դպրոցների հետ: Այսպես, տարբեր դպրոցներում դասախոսություններ են կարդացել Աբաջյանը, Ադիլխանյանը, Թելյանը, Մեյթիխանյանը, Ներսիսյանը, Տեր-Մինասյանը, Ֆելեքյանը, Սաղաթելյանը, Համբարձումյանը, Մուքիսյանը, Մովսիսյանը, Ավետիսյանը, Սաքապետոյանը, Դիրարյանը, Պարոնյանը, Պողոսյանը, Պետրոսյանը, Գասպարյանը, Մուրադյանը, Մակարյանը, Մխիթարյանը, Սաֆարյանը, Արզումանյանը, Վարդանյանը, Հայրապետյանը, Սրապիոնյանը, Գալստյանը, Ավետյանը, Խաչատրյանը, Աբրահամյանը, Գրիգորյանը, Դվոյանը, Քալանթարյանը, Ջրբաշյանը, Ավագյանը: Ջանազան դպրոցներում ամենատարբեր աշխատանքներ են ծավալել մանկավարժության ամբիոնի բոլոր դասախոսները: Ի դեպ, այս տարի բուհ-դպրոց հարաբերություններում մտցրել ենք նորույթ՝ ընդամենը մի քանի օր առաջ ֆակուլտետ հաճախեցին Երևանի 30-րդ դպրոցի ուսուցիչները և ավելի քան 40 աշակերտներ, ծանոթացան համալսարանի և ֆակուլտետի կյանքին, լսեցին պրոֆեսոր Ժենյա Քալանթարյանի դասախոսությունը: Մինչհամալսարանական կրթության վարչության հետ մեր մի շարք դասախոսներ մեկնել են շրջաններ, հանդես եկել լեզվի ու գրականության տարբեր թեմաներով, վարժարաններում և դպրոցներում պրոպագանդել Երևանի պետական համալսարանը:

Պրոֆեսորներ Մուրադյանը և Ավագյանը այս տարի ևս մասնակցել են Ղարաբաղում անցկացված պոեզիայի փառատոնի կազմակերպչական աշխատանքներին, եղել հանձնաժողովի անդամներ:

Ֆակուլտետում կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված լեզվի օրվան և գրքի օրվան («Վերնատուն» ընթերցասրահին նվիրվել են գրքեր, գրքեր են նվիրվել գորամասին):

Ֆակուլտետը ընդունել և գրավոր կարծիքներ է տվել կրթական, ուսումնական և գիտական տարբեր հիմնարկներից եկած թեկնածուական ու դոկտորական տասնյակ աշխատանքների:

ԵՊՀ գրահրատարակչական խորհրդի և «Հայագիտության հարցեր» ամսագրի աշխատանքներում իրենց ակտիվ մասնակցությունն են բերել Ավետիսյանը, Մուրադյանը, Ավագյանը:

Հայոց լեզվի մի շարք դասախոսներ մասնակցել են սփյուռքահայերի ամառային դասընթացներին:

Ֆակուլտետը ընդունել է համալսարանի Իջևանի մասնաճյուղի դասախոսական խմբին, քննարկել մասնագիտական հարցեր, ուսումնական ծրագրեր:

Հուլիսին կայացած ամառային սպորտային խաղերին որպես ուղեկցորդներ մասնակցել են մեր ֆակուլտետի տասնյակ ուսանողներ:

Ամբողջ տարվա ընթացքում Եզեկյանը, Ավետիսյանը, Մուրադյանը, Ավագյանը մասնակցել են կառավարությունում կայացած լեզվի հարցերի քննարկիմանը, պատրաստել նախագծեր: Ընդամենը մեկ օր առաջ կայացած նիստում հենց մեր շնորհիվ նախագիծ մտավ լեզվի խորհրդի ստեղծումը կառավարությանը կից (ակադեմիան առաջարկում էր իր կազմում ստեղծել):

Ֆակուլտետում անց է կացվել «Հայոց լեզու և գրականություն» դպրոցականների օլիմպիադան, Շիրակի, Տավուշի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Արմավիրի, Արարատի, Լոռու, Սյունիքի, Կոտայքի մարզեր են մեկնել մեր տասնյակ դասախոսներ:

Հաշվետու շրջանում հիմնվել են Խաչատուր Աբովյանի և Գևորգ Ջահուկյանի անվան լսարաններ, նախատեսվում է հիմնել Նարեկացու, Թումանյանի, Սայաթ-Նովայի անվան լսարաններ:

Առաջիկա օրերին ֆակուլտետում կտեղադրվեն ակադեմիկոսներ Տերտերյանի, Թամրազյանի, Զրբաշյանի կիսանդրիները (պատվանդաններն արդեն կան, կիսանդրիները ձուլարանում են):

Սեպտեմբերի 1-ին ֆակուլտետում կազմակերպվել է առաջին կուսեցիների ընդունում, օրը վերջացել է Կոմիտասի անվան պանթեոն այցելությամբ: Սպասում ենք առաջին կուրսեցիների ստուգարքային գրքույկներին՝ Աբովյանի տուն-թանգարանում դրանք հանձնելու համար:

Մեր դասախոսներ Համբարձումյանը և Գալստյանը վարում են հեռուստաշարքեր:

Փետրվարին կայացավ հերթական ավանդույթը՝ «Տյարն ընդ առաջի» արարողությունը մասնաշենքի բակում, որին մասնակցեցին նաև աստվածաբանները, հոգեբանները, պատմաբաններն ու տնտեսագետները:

Աննա Աբաջյանի միջոցներով վերանորոգվել է ընդհանուր լեզվաբանության կաբինետը, դահլիճի դիմացի ամբողջ պատը:

Ֆակուլտետում ընթանում է նաև կադրերի թարմացում. մանկավարժության ամբիոնում այն զգալի է, տեղաշարժեր կան լեզվի պատմության, ընդհանուր լեզվաբանության, գրականությունների ամբիոններում: Գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնում ընդունվել են արժանի ասպիրանտներ և հայցորդներ, որոնցից մեկն էլ Գրիգոր Շաշիկյանն է, ում ընդունելության գործում մեծ աշխատանքներդրեց ռեկտորատը:

Հասկանալի է, որ վերոնշված աշխատանքների իրականացնողները ամբիոններն են»:

Դեկանն այնուհետև մանրամասն ներկայացրեց բոլոր ամբիոնների կատարած աշխատանքները և ավելացրեց.

«Որտեղ աշխատանք՝ այնտեղ բացթողումներ և թերություններ, ուստի մի քանի խոսք նաև այդ մասին և մի քանի առաջարկներ:

1. Մագիստրատուրա չեն գալիս, քանի որ չկա աշխատանքի ասպարեզ: Մագիստրատուրա ավարտածը պետք է առավելություն և արտոնություններ ունենա, որը չկա:
2. Շարունակվում են ասպիրանտների և հայցորդների բողոքները պահանջվող կրեդիտային դասերից. դրանց մի մասը ոչինչ չի տալիս մասնագիտորեն, ավելորդ ժամանակ և աշխատանք է խլում (նկատենք, որ ԲՈՆ-ը այդ կրեդիտները չի պահանջում և հաշվի չի առնում):
3. Նորից այն համոզումն ենք հայտնում, որ թոյֆլ (TOEFL) քննությունը պետք է պահանջել ասպիրանտական տարիների ընթացքում և ոչ թե սկզբում (չի հանձնի, չի պաշտպանի):

Այս տարի այդ քննության պատճառով թափուր մնացին հեռակա ուսուցմամբ հայտարարված ժամանակակից հայոց լեզվի, ընդհանուր լեզվաբանության և ման-

կավարժության մասնագիտությունների տեղերը: Մյուս ամբիոններում տեղեր չպահանջվեցին, հավատացած ենք, որ նույնն էր լինելու: Նորից ենք ուզում ասել՝ պետք է քննարկել 5-ամյա ուսուցման անցնելու հարցը՝ 4 տարի բակալավրատ և 1 տարի մագիստրատուրա: Այդ դեպքում կունենանք 20 հազար բակալավր և 20 հազար մագիստրանտ, որը կլուծի և՛ աշխատավարձի, և համալսարանի առջև ծառայած բազում խնդիրներ:

4. Վաղուց հասունացել է լսարանները օդորակիչներով, համակարգիչներով և անլար համացանցով (վայֆայով- WiFi) հագեցնելու հարցը (այդ մասին շատ են գրում ուսանողները սոցհարցումներում):
5. Համակարգչի կարիք ունի նաև «Գրականագիտության» 012 խորհուրդը, որի վերաբերյալ հոգնել ենք գրություն գրելուց:
6. Այդպես էլ ֆակուլտետում չտեղադրվեց էլեկտրոնային գրատախտակը:
7. Ժամանակն է լեզուների ամբիոններում մշակել թարգմանական գործի ուսումնական ծրագիր (այսօր ռուսերենից Ջանփոլադյանից և Կիրակոսյանից գատ ուրիշ թարգմանիչ չունենք, այլ լեզուներից արդեն չեմ խոսում):
8. Կարգապահության հարցերը ևս միշտ չէ, որ բավարար են. քիչ չեն բացակայությունները թե՛ ուսանողների, թե՛ դասախոսների: Մեր մի շարք դասախոսներ իրենց աշխատանքը ամփոփում են միայն դաս տալով, չեն մասնակցում համալսարանական, ֆակուլտետային, ամբիոնային աշխատանքներին»:

Ելույթ ունեցող ամբիոնի վարիչներն ու գիտխորհրդի մյուս անդամները /Ն. Հարությունյան, Ս. Մուրադյան, Վ. Պետրոսյան, Վ. Գաբրիելյան, Մ. Բոցինյան.../ բարձր գնահատեցին հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի՝ հաշվետու ժամանակաշրջանում կատարած բեղմնավոր աշխատանքն ու իրենց շնորհակալությունը հայտնեցին ֆակուլտետում տիրող բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի և ուսումնական գործունեացի կատարելագործման համար:

Նիստն ամփոփեց համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Միմոնյանը: Նա հիմնականում գոհունակություն հայտնեց հայ բանասիրության ֆակուլտետում ծավալված գիտաուսումնական աշխատանքների և առաջընթացի համար, շնորհակալություն հայտնեց պրոֆ. Ա. Ավագյանին: Համալսարանի ռեկտորը, սակայն, ընդգծեց, որ անհրաժեշտ է համառ աշխատասիրությամբ ու ինքնանվիրմով հասնել նոր նվաճումների, վերացնել առկա որոշ թերացումները: Իսկ ինչ վերա-

բերում է դեկանի մատնանշած՝ ֆակուլտետում երբեմն ծագող դժվարություններին /օրորակիչներ, ազատ համացանց, էլեկտրոնային գրատախտակներ և այլն/, սիրով կուսումնասիրվեն ու անհրաժեշտ լուծումներ կտրվեն:

Նիստը համարվեց ավարտված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**